

Հ. Ա. Խ. Հ. Ա. Թ. Ա. Կ. Կ. Ս. Ա. Տ.  
№ 35 Ս Ա Ն Լ Ո Ւ Ց Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 35

ԲԺ. Ա. Բ. Ա Կ Ե Ք Ս Ա Ն Ց Ա Ն

ՇՈԳԵ-ՖՈՐՄԱԼԻՆԱՅԻՆ  
ԴԵԶԻՆՖԵԿՑԻՈՆ ԿԱՄԵՐԱ  
(ՑԱՊՈՆԱԿԱՆ ՏԻՊԻ)

ՅԵՎ

ՍԱԿԱՍԵՑԻ ՇՈԳԵԿԱՄԵՐԱՆ

Գ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 JAN 2018

614.48

Հ. Ա. Խ. Հ. Ա. Թ. Ժ. Ա. Վ. Ա. Մ. Ա. Տ. Ա. Վ. Ա. Վ.

№ 35

Ս ա ն դ ո ւ ս գ ր ա մ բ ա ն ս ա ն ս ա ն

№ 35

Բ ժ. Ա. Բ. Ա Լ Ե Ք Ս Ա Ն Ց Ա Ն

ՇՈԳԵ-ՖՈՐՄԱԼԻՆԱՅԻՆ  
ԴԵԶԻՆՖԵԿՑԻՈՆ ԿԱՄԵՐԱ  
(ՅԱՊՈՆԱԿԱՆ ՏԻՊԻ)  
ՅԵՎ  
ՍԱԿՄԵՑԻ ՇՈԳԵԿԱՄԵՐԱՆ

ԿԱՌՈՒՑՎԱԾ Ք, ՊԳՏԱԳԻՐԾՈՒՄԸ, ԳՈՐԾԱԴՐՈՒՅԹՈՒՄ  
ՓՈՐԱՐԿՈՒՄԸ ՈՒ ԽՆԱՄԸ



ՊԵՏԱԿԱՆ - Բ Ժ Հ Ա Վ Ա Բ Ա Բ Ի Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն - 1 9 3 4

Պատ. Խմբագիր՝ թժ. Արշ. Դավարյան  
Ֆել. Խմբագիր՝ Գ. Զենյան  
Միքաղեցի՝ Դար. Հակոբյան

Յերբ գեղինֆեկցիան (վարակի վոչնչացում) կատարվում է կանոնավոր հիմունքներով, յերբ ճշտությամբ պահպանվում են այն բոլոր կանոնները, վորոք սահմանված են դեղինֆեկցիոն դործի համար, ապա գեղինֆեկցիան ել իր հերթին վորոշում է այս կամ այն համաձարակի բախտը՝ այդ համաձարակը ժամանակին և ամբողջովին լիկվիդացիայի յենթարկելու խմաստով։

Ահա թե ինչու յուրաքանչյուր սան-համաձարակային աշխատող, վորը կապված է սուր-վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու դործի հետ, պետք է լավ ծանոթ լինի դեղինֆեկցիոն դործին, նրա յերթեմն բարդ դեղինֆեկցիոն միջոցներին, ապարատներին ու կամացներին։ Հակառակ դեպքում, յեթե դեղինֆեկցիան կանոնավոր կերպով չի կատարված, ապա նա փոխանակ ողուտ բերելու, միայն վընաս կրերի (թեև «դեղինֆակցիան» կատարված է, բայց վարակը մնում է)։

Եթե համաձարակների դեմ պայքարելը չափազանց կարևոր մի խնդիր է, իսկ մյուս կողմից, յեթե մեզ համար պարզ է դեղինֆեկցիոն դործի դերը համաձարակների դեմ պայ-

Հանձնված ե արտագրության 22 սարտի 1934 թ.  
Սոորագրված ե տպագրելու 14 մայրու 1934 թ.

Քաղաք 8502 (Բ). Հրատ. 2934. պատմեր 567 տիրում 1000

Գետիքատ, տպարան-Ծերեկան




11-28962 գր

քարելու ասպարիզում, այսինքն՝ յեթե զեզին-  
ֆեկցիայի միջոցով մենք զանկանում ենք  
վոչնչացնել այն վարակը, վորը բուն և դրել  
մարդուն շրջապատող միջավայրում, ապա և  
դեղինֆեկցիոն ձեռնարկումների նպատակներն  
ու խնդիրներն ավելի ևս սերտ կերպով կազ-  
ված են հակահամաճարակային բոլոր այլ մի-  
ջոցառումների հետ:

Քիմիական և Փիզիկական զանազան հա-  
կավարակային միջոցների շարքում մեր ամե-  
նորյա զեզինֆեկցիոն աշխատանքի մեջ վորոշ  
տեղ և գրավում գեղինֆեկցիոն կամերաների  
գործադրումը: Ուստի և զեզինֆեկցիոն կամե-  
րաները խոչոր գեր են կատարում զանազան  
վարակիչ հիվանդությունների զեմ մղվող  
պայքարի գործում: Թե ինչպիսի կառուցվածք  
ունեն այդ կամերաները, ինչպես պետք է ոգ-  
տագործել նրանց, ինչ դեպքում գործադրել և  
վորպիսի խնամք են պահանջում նրանք—ահա  
այդ բոլորը պետք են ավ իմանա յուրաքանչյուր  
սանիտարական-համաճարակային աշխատող,  
ներառյալ ամենաշարքային զեզինֆեկտորին:

Ստորեւ մենք կծանոթանանք մեր սան-հա-  
մաճարակային պրակտիկայում գործադրվող  
բազմաթիվ զեզինֆեկցիոն կամերաներից  
միայն յերկուսի հետ գրանցից մեկը ճապոնա-  
կան տիպի շոգեֆորմալինային զեզինֆեկցիոն  
կամերան ե, մյուսը՝ Սաքսեյի շոգեկամերան,  
վորոնք պվելի շատ են տարածված մեզանում:


Ճապոնական շոգե-ֆորմալինային կամե-



րան առաջին անգամ առաջարկվել է ոռուս-ճապոնական պատերազմի ժամանակ (1905 թ.): Տառարարին այդ առթիվ ասել է «Ճապոնական շոգե-ֆորմալինային ապարատները նրանց (ճապոնացիների) վճռական հաղթանակի գործում նույնպիսի խոշոր դեր կատարեցին, ինչպես և թնդանոթները»:

Այդ կամերաները համեմատաբար թեթեք տեսակի յեն լինում և իրենցից ներկայացնում են քառանկյունաձև մի շինվածք, վորի սովորական մեծությունը լինում է 3—4 խորանարդ մետր և վորը մոտավորապես մեկ տոնն քաշ և ունենում: Կամերան շինվում է փայտից: Կարկասը (շրջանակը) պատրաստվում է ամուր տեսակի փայտանյութերից (կաղնի, կեչի և այլն): Կամերան դրսից և ներսից (ամեն կողմից, բացի հատակից) շրջապատվում է սոսնձային ֆաներով: Այդպիսով ստացվում են կրկնակի պատեր և առաստաղ. Ներսը դատարկ է լինում, և, կամերան տաքացնելու համար, այդ դատարկությունը լցվում է սակավ ջերմահաղորդիչ նյութերով (խցան, թեփ, ծղոտ, կամ ուղղակի դատարկ, ոդային տարածություն և թողնվում յերկու պատերի միջև): Բացի դրանից, վորպեսզի կամերան ապահով լինի զանազան վնասվածքներից, նա դրսից և ներսից շրջապատվում է նաև մետաղե թիթեղով (3,5 կգ): Կամերան յերկաթով է ծածկվում Փաների վրայից, ըստ վորում թիթեղների յեղբերը կպած են լինում իրար: Ներսից թիթեղները պատած են լինում:

ասֆալտի լաքով, վորը ջերմակայուն նյութ է հանդիսանում: Կամերայի հետին պատն ունի մի դուռ, վորը պետք է հերմետիկ լինի և կիպ




Նկ. № 2. Շոգե-ֆորմալինային գիպիֆինկցիոն կամերա,  
(տեսք առջնից):

ծածկվի: Այդ նպատակով գուան յեղբերին թաղիք կամ ուետին են խփում և մետաղե սեղմիչներ են կցում: Կամերայի ներսում, առաստա-

զին կախարաններ (փայտե ձողեր կամ ցինկապատ խողովակներ) են ամրացվում, վորոսնց (կախարանների) կեռիկներից իրեր են կախում։ Հատակը չինվում ե փայտից և բավականաչափ ամուր, լինում ե թեք, ըստ վորում թեքությունն ուղղված ե լինում գեպի այս անցքը, (trap), վորի միջով դուրս ե գալիս խտացած խոնավությունը (ջուրը)։ Հատակի վրա սովորաբար փայտե ցանց ե դրվում։ Կամերան յերկանիվ ե և ունի րեսորներ։ Կամերան ունի հենարանները (կայուն դիրք)։ Կամերայի առջեկ պատի վրա ամրացված են ջրհանը, բաքը (ճակ), չոգեարտադրիչն իր վառարանով, խողովակները և այլ մասերը։ Ջրհանին կցվում ե վանգը, վորի մի ծայրին ամրացվում ե պտուտակածե ակոսվածք ունեցող մետաղե մի խողովակիկ, իսկ մյուս ծայրին դրվում ե մետաղի ընդունիչ ցանցը (վորպեսզի ջրհանի միջով ջուրը լցվի բաքն առանց կողմնակի մարմինների, վորոնք կարող են ազտոտել ջրհանն ու բաքը)։ Յեթե աշխատանքի ժամանակ ջրհանը ջուր չի մատակարարում (չի հանում), ապա պետք ե ստուգել՝ արդյոք չի՞ թուլացել ճարպոնը (օձիքներ) և այդ գեպքում անհրաժեշտ ե ամրացնել պնդողակը (բայկա), գուցե՝ և աղտոտվել են կափույրները (ելապան), գուցե՝ կափույրը դո՞ւրս ե յեկել բնից, կամ գուցե ջրհանի կորպուսի մեջ ո՞ղ ե անցել, վորը հեշտությամբ կարելի յե դուրս վանել՝ ջրհանի մեջ ջուր լցնելով։ Ջրհանից ջուրը լցվում ե բաքի մեջ, վորի

մանոմետրը, ցույց տալով 3 մթնոլորտ ճնշում, նշում ե, վոր ջրի քանակը բավարար է։ Բաքից չուրը խողովակների միջով և չնորհիվ վենտիլի անցնում ե գալարուկը (ՅԱՅԵՎԻԿ), վորը գտնվում ե հենց վառարանի վրա։ Խողովակների ստորին մասում, ջրի բաքի տակ կա մի հատուկ խողովակ արձակիչ ծորակով՝ բաքը լվանալու համար։ Գալարուկի մեջ ջուրը գոլորշի յե գառնում, և այդտեղից գոլորշին տարվում ե գեպի ցածում գտնվող խողովակը, վորպեսզի ադյուել հնարավոր լինի հետեւկել շողեարտադրմանը։ Գալարուկից շոգին յերկու անցքի միջով տեղափոխվում ե կամերան, ըստ վորում այդ անցքերից մեկը գտնվում ե կամերայի տանիքից մոտավորապես 20 ամ. գեպի ցած, իսկ մյուսը՝ ստորին մասում։ Այդ ստորին անցքով, խողովակի միջով շոգին տարածվում ե կամերայի ներսում՝ նրա պատերի (կողքի և առջեվի պատերի) ստորին մասերի յերկարությամբ գտնվող խողովակներն ունեն մինչև 3 մմ։ Հատված (սեպեն) ունեցող անցքեր և գտնվում են իրարից մոտավորապես 20—22 ամ. հեռավորության վրա։ Այդ խողովակների ծայրերը փակ են։ Վերին անցքով կամերայի մեջ մտնող խողովակը (և՝ վերին, և՝ ստորին խողովակները խաչաձև ձյուղավորություն ունեն) ունի մի չոգեհրիչ (ֆորցիկա), վորի միջով Փորմալին և ամիակ են ներմուծում կամերայի մեջ։

Ֆորսունկան մի գործիք ե, վորը կառուցված է յերկու խողովակների սխատեմի ձեվով, ըստ վորում խողովակների մեկը գտնվում և մյուսի մեջ: Կոնաձեվ ծայրով վերջացող ներսի խողովակի միջով անցնում է շոգին, իսկ դրա ի խողովակի միջով անցնում է ֆորմալինը:



Նկ. № 3. Ֆորսունկա:

1. Դրսի խողովակը, 2. ներսի խողովակը, 3. դրսի և ներսի խողովակների մեջ գտնվող ապածությունը, 4. ֆորմալինի խողովակը, 5. ֆորսունկայի վերջազրությունը (կամերայի ներսում), 6. Շոգի խողովակը, 7. Կամերայի պատը:

Վորը շոգու հոսանքով շոգու հետ միասին տարվում է կամերայի ներսը և այնտեղ ցըլում է:


Խողովակների խաչմերուկից տարածվում են յերկու ճյուղավորություններ, վորոնցից մեկը վերջանում է ապահովիչ (предохранитель-

նայ ևլափան) կափույրով՝ պայթուններ կանխեցու համար:

Կամերան տեխնիկապես վարելու աշխատանքը բարդ չէ:

Ստորեվ բերում ենք կամերայի առջեվիք պատի վրա գտնվող մասերի ցանկը համարագրված ձեվով.


1. Աշնագ
  2. Ջրհան
  3. Ջրի բաք
  4. բաքի մանոմետր
  5. վենտիլ՝ գալարուկի մեջ ջուր ներս թողնելու համար
  6. վենտիլ՝ բաքից ջուր դուրս թողնելու համար
  7. Վառարան
  8. Գալարուկներ
  9. վենտիլ՝ շոգի դուրս թողնելու համար
  10. վենտիլ՝ կամերան տաքացնելու համար
  11. ալյահովիչ կափույր
  12. խողովակների մանոմետր
  13. վենտիլ՝ շոգեհրչի (ֆորսունկայի) համար
  14. Փորմալինի և ամիակի թաս
  15. Փորմալինի և ամիակի թասի ծորակ
  16. Ջերմաչափ
  17. Փորսունկա
- Աշխատանքն սկսվում է այն ժամանակ, յերբ գեղինֆեկցիայի յենթակա իրերը տեղա-



Նկ. № 4. Շուրջ-Փորմալինային դիզինֆեկցիոն կամերայի սռջել  
պատի վրա գտնվող մասերի ցանցը:

Վորովմ են կամերայում: Դեղինֆեկցիայի յենթակա իրերը պետք ե կախել իրարից հեռու, այն հաշվով, վոր կամերայի յուրաքանչյուր մեկ խորանարդ մետր տարածությանն ընկնի 3—5 կոմպլեկտ իր (մեկ կոմպլեկտ համար վում են մոտավորապես 6 կլպմ. քաշ ունեցող իրերը, այսինքն կարմիր բանակայինի զգեստը): Իրերը կամերայում տեղափորելուց հետո կամերայի գուռը կիալ ծածկվում ե: Իրերը կամերայում տեղափորելիս, կամ, ավելի լավ, իրերը տեղափորելուց առաջ կամերան պետք է քիչ տաքացնել: Կամերան տաքացվում ե շոգեներս թողնելու միջոցով (տես ներքեվում): Կամերայի շահագործումը կայանում ե հետեւյալում: Փակելով գալարուկի մեջ ջուր ներս թողնելու վենտիլը (5), զանգի (1) միջոցով ջրհանով (2—3 դույլ) ջուր ե լցվում ջրի բաքը (3), մինչև վոր վերջնիս մանոմետրը (4) մինչև 3 մինուտ ճնշում ցույց տա: Դրանից հետո վառում են վառարանը (7), նախապես բաց անելով այն վենետիլը (9), վորը ծառայում ե փորձնական շոգի դուրս թողնելու համար: 3—5 րոպե անցնելուց հետո, յերբ գալարուկները բավականաչափ տաքանում են, քիչ (շատ քիչ) բաց են անում գալարուկի մեջ ջուր ներս թողնելու վենտիլը (5): Զուրը, մտնելով գալարուկի տաք խողովակները, շոգի յե զառնում: Այդ վենտիլով կարգավորելու միջոցով և միաժամանակ հտեւելով փորձնական շոգուն, կարելի յե լավ շոգի ստանալ (թանձր շոգին սպիտա-

կավուն և առանց ջրակաթիլների յել լինում)։  
 Հետո բաց են անում կամերան տաքացնելու  
 վենտիլը (10) և անմիջապես փակում են փորձ-  
 նական շոգի արձակեցու վենտիլը (9), մինչև  
 վոր ջերմաչափը (16)  $70^{\circ}$  ջերմություն ե ցույց  
 տալիս կամերայի ներսում։ Այսպիսով ստանա-  
 լով  $70^{\circ}$  ջերմություն կամերայում, բաց են ա-  
 նում ֆորսունկայի (17) վենտիլը (13), նախա-  
 պես կամերայի տանիքի վրա կամ նրա տակ  
 դունվող ամանի մեջ վոչ կաթնաման ֆորմալին  
 լցնելով, հաշվելով կամերայի յուրաքանչյուր  
 1 խորանարդ մետրին 25,0 ֆորմալին (մոտա-  
 վորապես գործ և ածվում 100,0 ֆորմալին)։  
 Շոգեհրիչի վենտիլը (13) բաց անելուց անմի-  
 ջապես հետո փակվում ե կամերան տաքացնե-  
 լու վենտիլը (10)։ Յերբ խողովակների (խո-  
 ղովակաչարքի) մանոմետրը (12) ցույց տա 2  
 մթնոլորտ (այդ նպատակով վառարանն ավելի  
 չառ պետք ե վառել), պետք ե կիսով չափ բաց  
 անել ֆորմալինի ամանի ծորակը (15), վորտե-  
 ղից ֆորմալինը ֆորսունկայի (17) միջոցով  
 լցվում ե կամերան։ Մեկ րոպե անցնելուց հե-  
 տո ֆորսունկայի վենտիլը (13) փակում են  
 և բաց են անում փորձնական շոգու վենտիլը (9)  
 և միաժամանակ, իհարկե, փակ ե լինում կամե-  
 րան տաքացնելու վենտիլը (10)։ Հենց այդ պա-  
 հից ել իսկապես սկսվում ե դեղինֆեկցիան և  
 առում ե սովորաբար 20-30 րոպե։ Այդ միջոցին  
 պետք ե հետեւել և կարգավորել ջերմաստի-  
 ճանն այնպես, վոր նա կամերայի ներսում  $65^{\circ}$



լինի: 20-30 րոպե անցնելուց հետո, Փորմալինը չեղոքացնելու նպատակով կամերայի մեջ ամիսկ և ներս թողնվում (Փորմալինի կիսէ չափ) ճիշտ նույն ձևով, ինչ և Փորմալինը:

Դեղինֆեկցիայի յենթարկված իրերը կամերայից հանելուց հետո, յեթե կարիք կա, նորից դեղինֆեկցիայի յենթակա իրեր են անմիշապես տեղափորում կամերայում և դեղինֆեկցիա կատարում: Աշխատանքի ժամանակ կամերան պետք ե քիչ թեքված լինի դեպի հետ (դեպի դուռը), վորպեսզի խտացած խոնավությունը (ջուրը) դուրս գա յետեղի մասում գտնվող անցքից (յեթե միայն անցքը յետեղի մասում ե գտնվում):

Կամերայի շահագործման ժամանակ պետք ե հիշել, վոր փորձնական շողի արձակելու վենտիլը (9) պետք ե անպայման բաց լինի, յերբ վառարանը վառվում ե և յերբ փակ են լինում կամերան տաքացնելու և շողեհրչի վենտիլները (10 և 13), վորովհետեւ այլապես դաշտուկը կարող ե պայթել:

Աշխատանքը վերջացնելուց հետո անհրաժեշտ ե բաց անել կամերայի բոլոր վենտիլները, բացի գալարուկի մեջ ջուր ներս թողնելու վենտիլից (5), վորպեսզի բաքից, գալարուկներից և խողովակներից ջրի մնացորդն անմբողջովին դուրս գա: Այնուհետեւ, յերբ ջուրն ամրողջովին դուրս ե գալիս, բաց են անում գալարուկի մեջ ջուր ներս թողնելու վենտիլը (5) և ջրհանի միջոցով դուրս են վանում ողը: Միա-

ժամանակ, ջրի ամբողջ մնացորդը գուրս թողնելուց հետո, վառարանը վառում են (վոչ շատ) մոտավորապես 3 րոպե տեղողությամբ, վորպեսզի գալարուկներում նմանապես ջուր չմնա: Այս բորբն արվում ե այն նպատակով, վոր ձմեռը սառելուց գալարուկները և մյուս մասերը չպատռվեն, մի յերեխույթ, վոր հաճախ կամերայի փչացման պատճառ ե լինում: Իսկ ամառը, յեթե կամերայի աշխատանքն անորոշ ժամանակով դադարեցված ե, խողովակներից չհեռացված ջուրը նույնպես կարող ե փչացնել կամերայի այդ մասերը (ժանդ): Աշխատանքից առաջ յուրաքանչյուր անգամ պետք ե ստուգել, թե սարքին են արդյոք մանոմետրը, ջերմաչափը և նմանապես ապահովիչ կափույրը (աշխատում են թե վոչ):

Ճաղոնական տիպի շողե-Փորմալինային կամերայում իրերի փչացման դեպքեր չեն նկատվում (յեթե, իհարկե, այդ կամերան կանոնավոր կերպով ու ճիշտ ե գործադրվում): Այդպիսի կամերայում կարելի յե դեղինֆեկցիայի յենթարկել նաև կաշվի իրեր ու կիսամուշտակներ, միայն թե ջերմաստիճանը պետք ե 60°-ից ավելի չլինի: Խրոմով գալարազած կաշին և կարմիր-դարաղած կաշինները փչացման ավելի քիչ են, յենթակա, քան Հում կաշին ու մորթիները գրացրած գրությամբ:

Միջատները (վրջինները, նրանց անիծները, փայտոջիլները, լուսապայմենը) կամերայում վոչնչանում են: Նաև մանաւանում են նույ-

նիսկ այն դեպքերում, յեթե գտնվում են բըղե  
րարձի մեջ (Զերժգովլսկի), 12 շերտ իրար վրա  
դարսած վերմակների մեջ և անդամ 30 շերտ  
իրար վրա դարսած մահուղի և 30 շերտ իրար  
վրա դարսած սպիտակեղենի մեջ (Սիսին, Ռամ-  
սուլ)։ Սպորավոր մանրեների բոլոր տեսակնե-  
ները նմանապես վոչնչանում են, յեթե նրանք  
ծածկված են միայն մի շերտ գործվածքով։  
Այդպիսի կամերայում ապավարակում կիրա-  
ռելու համար պետք է ապավարակման յենթար-  
կել իրերի մակերեսը (վորչափ ապավարակումը  
չի թափանցում իրերի ներսը։ Դրա համար ել  
պահանջվում է, վոր իրերն իրարից հեռու դա-  
սավորվեն կամերայում)։

Ճապոնական յեղանակով դեղինֆեկցիա  
կատարելուց հետո ապավարակման յենթարկ-  
ված իրերը չոշափելիս խոնավ չեն լինում։  
Յուրաքանչյուր ճապոնական կամերային կից  
պետք է լինեն հետեւյալ պարագաներն ու պա-  
հեստամասերը. դույլ, ուետինե շլանդ, մանեկի  
բանալի (գայնի ելու), կացին, սանդալավոր  
արգելակ (Տօրմօզ), շերմաչափ, վենտիլսեր, գա-  
լարուկ (2 սեկցիա), փոկափայտեր (պօքրոմո-  
ռայ Վալիկ) և անփլերի ճուլիներ։

Դեղինֆեկցիոն կամերան, ինչպես և ամեն  
մեքենա և ապարատ, համապատասխան ու ման-  
րակրկիտ խնամք ե պահանջում։ Խոնավության  
և չրջապատող ողի բարեխառնության խիստ  
աստանումների, ինչպես նաև քամիների ու փո-

շու ազդեցության տակ դեղինֆեկցիոն կամե-  
րան հեշտությամբ փչանում և անպետքանում  
ե (մաշվում ե)։ Կամերան պահելու համար  
պետք ե համապատասխան տեղ լինի՝ ծածկի  
տակ։ Յերկարատեղ աշխատանքի դեպքում դե-  
ղինֆեկցիոն կամերաները պետք ե պաշտպա-  
նել նաև արտաքին ազդեցություններից։ Կա-  
մերաները մի տեղից մի այլ տեղ տեղափո-  
խելիս անհրաժեշտ ե ձեռք առնել հետևյալ նա-  
խազգուշական միջոցները։ մանոմետրները  
պետք ե չորով կամ այլ ծածկոցնվ ծածկել.  
Հանել շերմաչափը, ծխնելույղի վերին մասը հա-  
նել (անտառի միջով կամ դարպասով ներս տա-  
նելիս)։ Հետևել, վոր խողովակներում և  
բաքում ջուր չմնա (սառելը, ժանդուտելը)։ Աշ-  
խատանքից հետո պետք ե կամերայից հանել  
փայտե ցանցը և կամերայի ներսը պետք ե լավ  
(մինչև չորանալը) մաքրել (պատերը, հատա-  
կը, առաստաղը), նախապես հեռացնելով կոն-  
դենսացիոն (խտացած) ջուրը։ Կամերայի ա-  
նիվները ամրանե ամիսներին պետք ե պաշտպան-  
ված լինեն չոր ու տաք ողից (արելից)։ Ռե-  
սորների փականքները, անխմներն ու անխմնե-  
րի ականոցները (ԵՄԱՀ կոլեց) պետք ե խնամ-  
քով յուղվեն։ Դռների սեղմիչ պարագաները  
դեղինֆեկցիայից հետո պետք ե յուղել։ Խողո-  
վակների և մյուս մետաղե մասերի վրա ժանգ  
յերեվալու դեպքում պետք ե այդ մասերը յու-  
ղաներկով ներկել (իսկ խիստ տաքացող տեղե-

բը՝ ասֆալտի լաքով): Մխոցավոր ջրհանը (պօրակերպ հասօն) պետք է պարբերաբար յուղվի: Անկասկած պետք ե միշտ հիշել, վոր անհրաժեշտ ջրի մնացյորդը ջրհանից ստորին անցքով գուրս բերել, վորովհետև այլապես ջրհանի կորպուսը կարող ե պատռվել (ձմեռ ժամանակ): Տեղափոխությունների ժամանակ ջրհանի բռնակը պետք ե ուղղաձիգ դիրք ունենա և ամրացվի փոկով կամ պարանով:

Այդպիսի կամերաների հետ միաժամանակ կարող են լինել և ստացիոնար (նույն տիպի) կամերաներ: Այդպիսի կամերաները շինվում են մի վորոշ տեղում՝ բաղնիքին, լվացքատանը, հի վանդանոցին, դեղինֆեկցիոն բազային առընթեք:

Նկատի ունենալով տեղական պայմանների խիստ բազմազանությունը, ստացիոնար շողենֆորմալինային կամերաները կարող են զանազան մեծությամբ շինվել, այդ նպատակի համար ուղարկործելով այս կամ այն արդեն պատրաստի շենքերը: Սովորաբար այդպիսի դեղքերում ընտրում են քառանկյունի շենքեր, և տեղյալ տարողությամբ.

1.10 խոր. մ. (յերկայն.—2,90 մ., լայն.—1,80 մ., բարձր.—2,80 մ.)  
2.20 խոր. մ. ( 3,35 մ., > 2,60 մ., > 2,30 մ.)  
3.30 խոր. մ. ( > 5,00 մ., > 2,60 մ., > 2,30 մ.)


Դեղինֆեկցիոն կամերա շինելու համար իբրև նյութ կարող են ծառայել տեղական շինանյութերը՝ աղյուս, քար, փայտ, պեմզա,

բետոն և այլն: Կամերայի շինանյութը և կատարված աշխատանքը պետք ե բարձր վորակի լինեն:

Ստացիոնար կամերայի համար շողի ստանալու նպատակով շողենկաթսա յե դրվում (շողեներատոր): Ժապոնական տիպի ստացիոնար դեղինֆեկցիոն կամերան՝ ինչպես և մյուս բոլոր ստացիոնար կամերաները պետք ե յերկու դուռ ունենան: Մեկը՝ դեղինֆեկցիայի յենթակա իբրերը ներս տանելու և տեղավորելու համար (կեղտոտ բաժանմունք), մյուսը՝ այդ իբրերը հանելու համար (մաքուր բաժանմունք): Այդ կամերան ունի վենտիլիֆացիոն (ողափոխության) հարմարանքներ (ներձգող և դուրս քաշող): Կամերան բավականաչափ տաքացնելու համար, մանավանդ ձմեռը, ջեռուցիչ պարագաներ (բատարեյաները) են դրվում: Կամերան վարելու աշխատանքի հետ կապված բոլոր մասերն ու պարագաները գտնվում են մաքուր բաժանմունքում:

Իր մյուս հատկանիշներով, իր կտոռուցվածքով և վարելակերպով ճապոնական տիպի ստացիոնար շողենֆորմալինային կամերան նման է շարժական կամերային և հետեւյում է նյույն սկզբունքներին:

Սահմեջի սիստեմի դեղինֆեկցիոն շողենկամերան, հակառակ ճապոնական տիպի շողենֆորմալինային կամերայի, շինվում և մետաղից, աշխատում և բարձր ճնշման ու շողուներք, բայց առանց Փորմալինի:



Հ 6. Սորբիկ սեռական սեռական համական շառավագան (անօք կողմէն):

**Սաքսեյի չողեկամերան համեմատաբար**  
**դյուրաշաժ ե (քաշը հավասար ե մոտ 0,8 տոն-**  
**նի): Կամերան յերկանիվ ե և տեղաշարժվում ե**  
**մի ձիու միջոցով:** Սաքսեյի կամերան բաղկա-  
**ցած ե յերկու հիմնական մասերից. իսկական**  
**կամերայից, վորն իրենից ներկայացնում ե հո-  
 րիզոնական դիրքով տեղադրված մի գլանաձև**  
**կամերա և, նրա առջև (ավելի մոտ ձիուն)՝ ուղ-  
 ղաձիգ դիրքով ամրացված նույնպես գլանաձև**  
**շողեկաթսայից: Սովորաբար կամերան լինում**  
**է հետևել մեծության. տրամադիծը՝ 0,80,**  
**յերկարությունը՝ 1,44 մ. հետեաբար՝ ծավալը**  
**հավասար ե լինում 0,72 մ<sup>3</sup>:** Բնդհանրապես,  
**կամերայի ծավալը հաշվելու համար նկատի յեն**  
**առնում յերկարությունը և շառավիղին վե-  
 րաբերող տվյալները և πr<sup>2</sup>.h. Փորմուլայով**  
**հաշվում են ծավալը: Տվյալ դեպքում՝ r =  $\frac{d}{2} =$**   
 $= \frac{0,80}{2} = 0,40, h = 1,44, \pi = 3,14:$  Հիշյալ թվական տվյալնե-  
**րը գնելով πr<sup>2</sup>.h Փորմուլայի մեջ, մենք կստա-  
 նանք (խանալով վոր π անփոփոխ մեծություն**  
**ե և հավասար ե 3,14) — 3,14.0,40<sup>2</sup>.1,44, այ-  
 սինքն՝ 0,72 մ<sup>3</sup>:**


Կամերան յետեվից ունի մի դուռ, վորը  
 բացվում ե ողերի (պետք) վրա և կիպ ծածկ-  
 վում ե պտուտակներով: Կամերան կառուցվում  
 ե կըկնակի մետաղե պատերից, այնպես, վոր  
 յերկու պատերի միջեղ դատարկ տարածու-  
 թյուն («պատյան») ե մնում, վորը և ծառա-  
 յում ե կամերան տաքացնելու նպատակին: Կա-

մերայի ներսում վերևից ամրացված ե շինկապատ յերկաթից շինված կիսակամարածե մի ծածկոց (վորպեսզի գեղինֆեկցիայի յենթարկվող իրերը շատ չխոնավանան), իսկ կամերայի շածում գտնվում ե նույնպես կիսակամարածե փայտե մի ցանց (վորպեսզի իրերը չթրջվեն): Աւզդի ծածկոցի տակ, առջեվից գեպի հետ ձգվում ե մետաղե կեռավոր մի ձող, վորից իրեր են կախում: Կամերայի վերին կիսակամարում յերկու անցք կա (անցքերը բացվում են գեպի այն տարածությունը, վորը գտնվում ե կամերայի վերին կամարի և ծածկոցի միջև): Մի անցքը կապ ունի կամերայի արտաքին և վերին մասերում գտնվող ստուգիչ պարագաների հետ, իսկ մյուս անցքը, վորը կամերայի մեջ չողի ներս թողնելու համար ե ծառայում, հատուկ խողովակների (մագիստրալ) միջոցով միացած ե շոգեկաթսայի հետ: Կամերայի ներսում, ստորին կամարում (փայտե ցանցի տակ) կա մի անցք, վորտեղից շոգին (իսկ դեղինֆեկցիայի սկզբում ողը) գուրս ե բերվում կամերայի տակ դրսից գտնվող շոգետար խողովակի միջով:

Կամերայի դրսի մասում վերևից ձգվում ե մագիստրալը (խողովակաշարք), վորը վերջանում ե յերկու ճյուղավորությամբ: Դրանցից մեկը կամերայի մեջ շոգի ներս թողնելու համար ե, մյուսը՝ «պատյանի» մեջ շոգի ներս թողնելու համար (կամերան տաքացնելու համար), ըստ վորում «պատյանը» հաղորդակից

չե կամերային: Կամերայի վերևում, մագիստրալի կողքին ամրացված ե փոքրիկ խաչմերուկ-խողովակ, վորը յերեք ազատ ծայր ունի. մի ծայրին գտնվում ե մանոմետրը, մյուս ծայրին՝ ապահովիչ կափույրը, իսկ միջին ծայրին՝ ջերմաչափը, վոչ պակաս 120°Ց-ի սանդղակով (առաջ): Ներքեվում, կամերայի տակ միջապատային դատարկ տարածությունից (պատյանից) մի անցք ե բացվում, վորտեղից դուրս ե գալիս հիշյալ տարածությունից շոգին տանող շոգետար խողովակը (այդ խողովակը գտնվում ե այն խողովակի կողքին, վորը շոգին դուրս ե տանում իսկական կամերայի միջից):

Շողեկաթսայի տաքացման մակարդակը սովորաբար հավասար է 2,25 մ<sup>2</sup>: Կաթսայի տակ, ներքեվում գտնվում ե վառարանը, վորտեղից ծուխը դուրս ե գալիս մի ծխնելույղով, վորը գտնվում ե կաթսայի մեջ և վորը դուրս ե գալիս կաթսայի մակերեսը (գուրով): Կաթսան ինքնայեռ-խողովակային տիպի յե (Շուխովի սիստեմի): Կաթսայի ընդհանուր կարողությունը հավասար ե մոտվորապես 120 դցմ<sup>3</sup>, Աշխատանքի ժամանակ կաթսայի մեջ լցվում ե սովորաբար 80-85 լիտր ջուր: Կաթսայի վրա, վերևվում գտնվում ե մանոմետրը, ասիահովիչ կափույրը և մի անցք՝ յերկաթե պտուտակաձեկ խցանով: Այդ անցքի միջով, նախ քան աշխատանքն սկսելը, ջուր են լցնում կաթսայի մեջ, ինչպես նաև այդ անցքի միջոցով լվանում են կաթսան: Կաթսայի առջեվի մակերեսին ամ-



Ա. Հ. Սարգսի ստուգի գնդի վեհական կամերական մասերի սպառի (անգլ.՝ Spurting apparatus)


բացված և ջրաչափ ապակին, իսկ դրա կողքին, բայց տարբեր մակերեվույթի վրա ամրացված են յերկու արձակիչ (սպուտնի) ծորակներ, վորոնցից մեկի՝ վերին ծորակի միջոցով հետեւյում են շողեարտադրմանը, իսկ մյուսի՝ ստորին ծորակի միջոցով հետեւյում են կաթսայի մեջ յեղած ջրի քանակին: Կաթսայի վերին մասում գտնվում են նաև այն մագիստրալ-խողովակը, վորը կամերային շողի յե մատակարարում:

Շողեկաթսայի հետեւի մասում գտնվում են խնամքով շինված և կիալ փակվող 2-3 դռնակ, վորոնց միջոցով կաթսայի ներքին մակերեսը մաքրում են կրագիրտից (հարու) և այլ կեղտից: Այդ գոնակների տակը գտնվում է մի խողովակ, վորը չըհանից ջուր և մատակարարում կաթսային: Ջրհանն ամրացված և կաթսայի և կամերայի միջև: Ջրհանի տակ ուղղաձիգ դիրքով ամրացված և մի խողովակ, վորն ընկղմում են ջրով լի դույլի մեջ:

Մաքսեյի շողեկամերան վարելու, համար ստորեվ զետեղում ենք կամերայի մասերի ցանկը համարագրված ձեվով.

1. կաթսայի յերկաթե փակ խցան
2. ջրհանի խողովակը՝ դույլից ջուր քաշելու համար
3. ձեռքի ջրհան
4. ձեռքի ջրհանի վենտիլ
5. ջրաչափ ապակի

4. Ջրաչափի ապակու ստորին ջրթող կարճ  
 խողովակ  
 4. Ջրաչափի ապակու վերին ջրթող կարճ  
 խողովակ  
 5. կաթսայի վերին փորձնական (շոգու-  
 համար) ծորակ  
 6. կաթսայի ստորին փորձնական (ջրի հա-  
 մար) ծորակ  
 7. կաթսայի վառարան  
 8. կաթսայի ապահովիչ կափույք  
 9. կաթսայի մանոմետր  
 10. պատյանի և կամերայի մեջ չողի ներս  
 թողնելու վենտիլ  
 11. պատյանի մեջ չողի ներս թողնելու  
 վենտիլ  
 12. պատյանից չողի արձակելու վենտիլ  
 13. կամերայի մեջ չողի ներս թողնելու  
 վենտիլ  
 14. կամերայից չողի արձակելու վենտիլ  
 15. կամերայի մանոմետր  
 16. կամերայի ջերմաչափ  
 17. կամերայի ապահովիչ կափույք  
 18. կաթսայից ջուր արձակելու վենտիլ  
 Սաքսեյի չողեկամերան գործարկելու հա-  
 մար ամենից առաջ անհրաժեշտ ե կամերային  
 տալ այնպիսի դիրք, վոր կամերայի ներսում  
 դոյցող կոնդենսացիոն ջուրը հավաքվի մի  
 տեղում: Դրա համար ել կամերային պետք է  
 տալ այնպիսի թեքություն, վոր ջուրը հա-



Նկ. № 8. Սաքսեյի սիստեմի դեղենֆեկցիոն կամերա.  
 (տեսք հետեւ):

վաքի կամերայի հատակում գտնվող անցքէ  
չուրջը:

Կամերայի դուռը բաց անելով, դեղինֆեկ-  
ցիայի յենթակա իրերը կախում են կամերայի  
ներսում գտնվող կեռավոր կախարանից, ինչ-  
պես նաև դարսում են փայտի ցանցի վրա:  
Այս աշխատանքը կատարելիս պետք է հիշել,  
վոր անհրաժեշտ ե ամեն կերպ խուսափել իրերը  
խիտ (իրար մոտ) կերպով դարսելուց, ինչպես  
նաև պետք է իրերը դարսել այնպես, վոր նրանք  
չկազմակերպ կամերայի մետաղե մասերին: Դրանից  
հետո կամերայի դուռը կիս ծածկվում ե: Ա-  
նուհետեւ հանում են կաթսայի յերկութե փակ  
խցանը (1), ջուր են լցնում կաթսայի մեջ և  
այնքան, վոր ջրի մակերեվույթը հավասարվի  
ջրաչափ ապակու (4) միջին յերրորդին: Դրա-  
նից ավելի ջուր չպետք է լցնել: Իսկ յեթե ջրա-  
չափ ապակին (4) պատահարար ջարդված ե,  
այդ դեպքում ջրի մակերեվույթն ստուգելու  
համար անհրաժեշտ ե ուշադրություն դարձնել  
վերին և ստորին փորձնական ծորակների (5 և  
6) վրա՝ վերին ծորակից պետք ե չոդի դուրս  
դա, իսկ ստորին ծորակից ջուր: Յեթե ստորին  
փորձնական ծորակից չոդի յե դուրս դալիս, ա-  
պա այդ նշանակում ե, վոր կաթսայի մեջ բա-  
վականաչափ ջուր չկա, ուստի և կաթսան կա-  
րող ե շարքից ջուրս գալ. դրա համար ել կաթ-  
սայի ջեռուցումը դադարեցվում ե (վառելլ  
դադարեցնում են):

Կաթսայի մեջ ջուր լցնելուց և մետաղե

փակ խցանը փակելուց հետո սկսում են կաթ-  
սայի տակը վառել (7). վառում են չոր փայտ  
կամ այլ տեսակի վառելանյութ: Ջրի աստի-  
ճանական յեռմանը զուգընթաց շարունակ ձեռ-  
քի ջրհանի միջոցով (3) ջուր են ավելացնում  
կաթսայի մեջ, մինչեւ վոր ջրի մակերեվույթը  
հասնում ե ջրաչափ ապակու միջին յերրորդին.  
Հետո (պտուտակելով) ջրհանի մեջ են մտցնում  
դույլից ջուր քաշելու խողովակը (2) և այդպի-  
սով ջուր են քաշում կաթսայի մեջ, վորից հե-  
տո ձեռքի ջրհանի վենտիլը (3) փակում են:  
Դույլից ջուր քաշելիս պետք ե շարունակ հետե-  
վել, վոր ջրհանի խողովակը ընկղմված լինի  
ջրի մեջ, վորպեսզի այդպիսով ող չմտնի ջրհա-  
նի մեջ, վորովհետեւ այլապես ջրհանը ջուր չի  
քաշի: Ճնշումը կաթսայում չպետք ե ավելի լի-  
նի, քան կաթսայի մանոմետրով (9) ցույց  
տրողով ճնշման 1,5-ը: Դեղինֆեկցիա կատարե-  
լու համար ամենից առաջ կամերան տաքացվում  
ե (վորպեսզի դեղինֆեկցիայի յենթարկվող ի-  
րերը շատ չխոնավանան): այդ նպատակով բաց  
են անում պատյանի և կամերայի մեջ չոդիներս  
թողնելու վենտիլը (10) և պատյանի մեջ չո-  
դի ներս թողնելու վենտիլը (11) և չոդի յեն  
լցնումը միջպատային տարածության մեջ, վոր-  
տեղից ողը չոդու ճնշման տակ աստիճանաբար  
դուրս ե մղվում և պատյանից չոդի դուրս տա-  
նող խողովակի միջոց դուրս ե գալիս: Կամե-  
րան բավականաչափ տաքացնելուց հետո (40°-  
50°), պատյանի մեջ չոդի ներս թողնելու վեն

տիլը (11) փակում են այնչափ, վոր դուրս գա շոգու միայն աննշան մասը (շոգու խնայողություն): Նրանից հետո բաց են անում կամերայի մեջ շոգի ներս թողնելու վենտիլը (13), ըստ վորում կամերայից շոգի արձակելու վենտիլը (14) պետք է բաց լինի այնքան ժամանակ, մինչև վոր կամերայից շոգի դուրս տանող խողովակից թանձր շոգի չերեվա, վորից հետո անմիջապես փակում են կամերայից շոգի արձակող վենտիլը (14): Յերբ կամերայի մանումետրը (15) ցույց տա 0,5 և այդ մթնոլորտային ճնշման համեմատ ջերմաչափի 112° ջերմաստիճան ցույց տա, այդ ժամանակ փակում են կամերայի մեջ շոգի ներս թողնելու վենտիլը (13) և հենց այդ պահից ել սկսվում է իսկական դեղինֆեկցիան, վորը տեվում է 20—40 րոպե: Այն դեպքում, յեթե շատ իրեր կան և այդ իրերն իրենց բնույթով յերկարտեղ ներգործության դեղինֆեկցիա յեն պահանջում, և յեթե դեղինֆեկցիայի յենթարկվող իրերը վարակ են պարունակում իրենց մեջ, մի վարակ, վորը նմանապես յերկարատեղ ներգործություն և պահանջում, ապա դեղինֆեկցիան տեվում է 40 րոպե, հակառակ դեպքում 20 րոպեն ել բավական է: Դեղինֆեկցիայի ժամանակ կամերայի մանումետրը (15) կարող է 0,5 ճնշումից ավելի ցույց տալ. այդ դեպքում կամերայից շոգի դուրս թողնելու վենտիլը (14) պետք է համապատասխան կերպով քիչ բաց անել. և, ընդհակառակը, յեթե կամերայի մանումետրը

(15) սկսի իջնել (0,5-ից պակաս լինի), ապա պետք է բաց անել կամերայի մեջ շոգի ներս թողնելու վենտիլը (13): Փամանակ առ ժամանակ նպատակահարմար է բաց անել կամերայից շոգի արձակելու վենտիլը (14), վորպեսզի կամերայից դուրս դա կոնդենսացիոն խոնավությունը (այլապես կամերայում կարող է շատ ջուր հավաքվել): Այս դեպքում, իհարկե, պետք է հիշել, վոր կամերայի մանումետրը (15) շարունակ պետք է ցույց տա 0,5:0,5 ճնշումը, վոր ցույց է տալիս մանումետրը, պետք է հավասար համարել 1,5 մթնոլորտային ճնշմանը, վորովհետև այդ 0,5-ի մեջ չի մտնում նորմալ մթնոլորտային ճնշումը: Մանումետրի զերոն համապատասխանում է արտաքին նորմալ մթնոլորտային ճնշմանը: Շոգու (հազեցած) ջերմաստիճանի և նրան համապատասխանող ճնշման հարաբերությունը պարզելու համար բերում ենք հետևյալ աղյուսակը.

Ջերմաստիճան ըստ Ցելսիուսի	Ճ ն շ ո ւ մ ը
100	760,0 — 1 մթնոլորտա (ըստ մանումետրի-9)
102,68	1,1 մթնոլորտ
105,17	1,2 *
107,50	1,3 *
109,68	1,4 *
111,74	1,5 * (Սաքսենի աշխատաքի սահմանը)
120,80	2,0 *
133,91	3,0 *
144,00	4,0 *

Կամերայի ներսում ճնշումը վոչ մի գեպ-քում չպետք է հասցնել 0,5-ից ավելի, վորով-հետև այլապես կամերան կարող ե պայթել (կամերայի պատերի հաստությունը 0,5-ից ավելի թույլ չի տալիս): Վորոշ կամերաների վրա սովորաբար կիրառվող տասնորդական հաշվարկման (1 կգր. × 1 սմ<sup>2</sup>) փոխարեն կարող են նշումներ լինել անդիմական ֆունտերով: Այդպիսի մանոմետրներում (անդիմական) կիրոգրամի և սանտիմետրի փոխարեն գործ են ածվել ֆունտը և դյույմը: Տասնորդական հաշվարկման (1 կգր. × սմ<sup>2</sup>) 1 խազը համապատասխանում է 16 ֆունտի՝ ըստ անդիմական մանոմետրի (ֆունտ × դյույմը<sup>2</sup>):

Յերբ լրանում ե գեղինֆեկցիայի ժամանակը, կամերայի մեջ չոդի թողնելու վենտիլը (13) բոլորովին փակում են և բաց են անում կամերայից չոդի արձակելու վենտիլը (14) և այնուհետև շարունակում են տաքացնել պատյանը՝ գեղինֆեկցիայի յենթարկված իրերը «չորացնելու» համար: Վենտիլիացիա կատարելուց (5-10 րոպե անց) հետո բաց են անում դուռը և իրերը կամերայից դուրս են բերում:

Զրհանի միջոցով կաթսայի մեջ ջուր լցնելու համար նպատակահարմար ե դույլի մեջ հավաքել այն շոդին ու ջուրը, վորոնք դուրս են գալիս կամերայից շոդին ու կոնդենսացիոն խոնավությունը դուրս տանող խողովակի միջով (14): Այդ նպատակով ոետինե խողովակի միջոցով № 14 խողովակը միացնում են դույլի

հետ, վորտեղից տաք ջուրը հարկ յեղած գեպ-քում ջրհանով քաշում, լցնում են կաթսան (խնայողություն): Պետք ե լավ հիշել, վոր այն կամերաներում, վորոնք աշխատում են բարձր ճնշման տակ և բարձր ջերմաստիճանով, չի կարելի գեղինֆեկցիայի յենթարկել այնպիսի իրեր, վորոնք հեշտությամբ փշանում են, այն ե՝ մորթիներ, վոտնամաններ կաշվեու ոետինե այլ իրեր, խիստ կեղտոտած ոբյեկտներ և այլն: Նախ քան կամերան գործարկելը, պետք ե ստուգել կաթսայի կամերայի վրա գտնվող ապահովիչ կափույթները (8 և 17), նմանապես մանոմետրներ (9 և 15) և ջերմաչափը (16):

Միաժամանակ անհրաժեշտ ե, վոր աշխատանքից դուրս լավ խնամք տարվի կամերայի վերաբերմամբ: Կամերան պետք ե պաշտպանված լինի արտաքին վնասակար ազգեցություններից, վորոնք վիշացնում և անպետք են դարձնում կամերան: Ամբողջ արմատուրան պետք ե հաշվի առնվի և համապատասխան ձեվով պահպի, պահպանվի: Ոետինե միջադիրը (պրօյաձեա) գրաֆիտով (կամ տայըկով) պետք ե լավ սրբել, վոր չփշանա: Յեթե ջրհանը կանոնավոր չի աշխատում, ապա պետք ե քանդել ջրհանը, լավ մաքրել և նորից հավաքել մասերը: Կաթսայի համար գործածվող ջուրը չպտեք ե շատ կոշտ լինի, վորովհետեւ այլապես կրագիրտ (հակով) գոյանալու շնորհիվ նախ ստիպված են լինում հաճախակի մաքրել կամե-

բայի ներքին մակերեսը (կաթուայի վրա դժուվող դռնակների միջոցով) և, հետո, շատ կրադիրա առաջանալու զեպքում շատ ել վառելիք և պահանջվում, վորովհետեւ այդպիսի դեպքերում տաքացման պրոցեսը դանդաղում է։ Աշխատանքը վերջացնելուց հետո ամեն անդամ պետք է ջուրը դուրս բերել կաթուայից՝ բողոք ծորակները բաց անելու միջոցով, մասնավորապես բաց անելով կաթուայից ջուր արձակող վենետիլը (18), վորովհետեւ այլապես կաթուան կարող է պայթել (ձմեռ ժամանակ) և փչանալ (ժանգոտել)։ Կաթուայից ջուրը պետք է հեռացնել այն ժամանակ, յերբ կաթուան արդեն առել է։

Ինչպես ճապոնական տիպի շողեֆորմալինային կամերայի և Սաքսեյի շողեկամերայի, այնպես ել մնացած բոլոր կամերաների աշխատանքի վերաբերմամբ մշտական և սիստեմատիկ վերահսկողություն է պահանջվում։ Կամերայի փորձարկման ժամանակ սանիտարական բժիշկը պետք է ուշադրության առնի հետեւյալը։ 1) վոր կամերան տեխնիկապես միանգամայն սարքին լինի և 2) վոր կամերան լիակատար բիոլոգիական ներգործություն ունենա։ Կամերայի բիոլոգիական ներգործությունն ստուգելու համար դորձադրվում են՝ միջատներ, մանրեներ և տերմիկ վերահսկության (Փիզիկո-քիմիական) միջոցներ։ Միջատներից վերցնում են վոջիլներ (և անիծներ), լվեր և փայտոջիլներ, վորոնց տեղավո-

րում են կամ բաց դրությամբ կամ դնում են մի քանի տակ ծալած դործվածքի, հագուստի մեջ, այնուհետև այդ միջատներից դնում են և գրպանների, և թելերի մեջ, հագուստի ծակուծուկերում։ Միջատներ են դնում կամերայի զանազան տեղերում, վորպեսզի ստուգեն կամերայի ներգործության կանոնավրությունը կամերայի զանազան մասերի վերաբերմամբ։ Թե վորպիսի ներգործություն ունի դեղինֆեկցիոն կամերան վոջիլների կենսունակության վրա, այդ պետք է ստուգել հետեւյալ կերպ։ գեղինֆեկցիայից հետո պետք է խոշորացուցով հետեւյեն վոջիլի աղիքների պերիստալութիւն (կծկանք, շարժում) վոչ պակաս քան 1 բոպեյի ընթացքում, և յեթե վոջիլը չի շարժվում և յեթե աղիքների պերիստալութիւնը չի նկատվում, ապա և դեղ կամերայի ներգործությունը լիակատար է։ Անիծների կենսունակությունը ստուգվում է հետեւյալ կերպով։ անիծները դնում են տերմոստատի մեջ և ջերմաստիճանը հասցնում են 25—32° Ց։ Տերմոստատի մեջ պետք է խոնավություն լինի (ջրով աման)։ Վոջիլներ պետք է վերցնել անմիջապես մարդու վրայից, վորովհետեւ այլապես վոջիլը, վորոչ ժամանակ մարդու մարմնից դուրս մնալով, կորցնում են իր գիմագրողականությունը։

Մանրերանական վերահսկողություն կիրառելու համար մանրեներից վերցնում են՝ ստաֆիլոկոկների, ստրեպտոկոկների, աղեցու-

ալիկների, խոտացուապիկի և սիրիյան խոցի սպորների 24 ժամվա կուլտուրաներ։ Ստերիլ գործվածքը (ավելի լավ ե մետաքսեղեն) ծծեց նում են մանրեների 24 ժամյա կուլտուրաների եմուլսիայով (եմուլսիան Փիզիոլոգիական լուծույթում)։

Գործվածքի ստերիլիզացիան (մինչև եմուլսիա ծծելը) կատարվում ե չորանոց-պահարանում  $\frac{1}{2}$  ժամվա ընթացքում,  $160^{\circ}$  ջերմաստիճանով։ Վարակված գործվածքը, Պետրիի եքսիկատորում զետեղված թասում չորաց ներուց հետո վերոհիշյալ ձևով տեղավորվում է կամերայում։ Դեղինֆեկցիայից հետո, դեղինֆեկցիայի յենթարկված գործվածքը դրվում է ստերիլ բուլյոնի մեջ, վորը մի քանի որ (8) պահվում է տերմոստատում՝  $37^{\circ}$  ջերմաստիճանով։ Բուլյոնի հետագա ստուգումը (քսուք ներ, միկրոսկոպիա, վերացանում այդ միջավայրերում) համոզում ե, վոր դեղկամերայի ներգործությունը կանոնավոր ու լիակատար ե։


Զերուցման աստիճանը (կամերայի ներում) ստուգելու համար գործ են ածում մաքսիմալ ջերմաչափեր։ Այդ նպատակով շատ ոգտավետ ե գործադրել նաև դյուրահալ նյութեր։

Հ	Ն Յ Ո Ւ Թ	ՀԱԼԺԱՆ ՋԵՐՄ	ԲՆՀԱՂԻԱԿ ԴԵՂԻՆՓԵԿ
Հ	Ա Ս Թ Ի Թ	ԱՍՏԻՃ. ԸՆԿ	ՑԻՒՆ ԱՊԱՐԱՏԻ ՑԵՂԱԲՈՒՄԻ ՀԱՄԱՐ
1	Կարբու. թթու (կրիստալ)	40—42°	
2	Ֆորմալինիդ . . . . .	46,5°	
3	Թիմոլ . . . . .	50—51°	Ճապոնական տիպի
4	Բենզիլիդեն—անիլին . .	52°	շողենֆորմալինացիկ
5	Դեղին մոմ . . . . .	63—65°	կամերա (և գակուռ և ամ կամերա)
6	Ազոբենզոլ . . . . .	68°	
7	Կարֆո պարաֆին . . . . .	74—80°	
8	Նաֆառլին . . . . .	80°	
9	Սալիկիլին . . . . .	91—92°	
10	Լ-նաֆառլ . . . . .	95°	Սակոերի կամերա
11	Ֆենանտրեն . . . . .	98—100°	և մյուս հոսուն շողեն
12	Բըհոցկատեին . . . . .	104°	գեհամերաներ
13	Պիզամիզոն . . . . .	108°	(և ավտոկլավ)
14	Ռիզոբին . . . . .	110°	
15	Բենզոնաֆառլ . . . . .	110—111°	Զոբ և տաք ողով
16	Մծումբ . . . . .	120°	ավաստող կամերա
17	Պիզոպալոլ . . . . .	122°	բաներ՝ հերիոս և
18	Սուլֆոնալ . . . . .	124—126°	այլն (նմտնապես)
19	Մեզանյութ . . . . .	132°	ավտոկլավ)
20	Դիսուկոզ . . . . .	146°	

Այդ նյութերը տեղավորվում են Շտիխ-տերի ստուգիչ խողովակի մեջ։

Շտիխտերի խողովակիկը շատ պարզ կառուցվածք ունի, 5 սմ. յերկարություն,  $\frac{1}{2}$  սմ. տրամագիծ ունեցող ապակե խողովակի մեջ համապատասխան ջերմաստիճանի դյուրահալ նյութ են լցնում կիսով չափ և յերկու ծայրերը կրակի վրա զողում են (զողիչ լամպ, պրիմուս) և մտցնում են մի այլ, ավելի մեծ խողովակի մեջ (յերկայնությունը—8,5—9 սմ.,

տրամադիճը—1,2 մմ.), վորը նույնպես զողվում է: Շտեխտերի խողովակիկը կամերայի մեջ զրվում է ուղղաձիգ դիրքով այսպես, վոր քիմիական նյութը գտնվի վերին մասում: Արդյունքը դրական է համարվում, յեթե նյութը հալվել ու անցել է խողովակիկի ստորին մասը:



Նկ. № 2. Շտեխտերի խողովակիկը—1. ներսի խողովակիկ, 2. գրսի խողովակիկը, 3. դյուքտահալտակիկը:

Այդ նյութի հալումը կոնդակվում է առաջացնում և, հետևաբար, զանգահարություն (ելեկտրական լամպի շղթան միացվում է): Այդ նպատակով վերցնում են հետեյալ

Հալվածքները: 1) Վուդի հալվածքը (անագ—3 մաս, արձիճ—5 մաս, վիսմուտ—8 մաս): Հալման կետը—100 ° Ց: 2) Լիպովիցի հալվածքը (կազմիում—3 մաս, անագ—4 մաս, արձիճ—8 մաս, վիսմուտ—15 մաս): Հալման կետը—60° Ց:

Վարպեսզի ստուգենք, թե կամերայի մեջ զետեղված իրերի մեջ մտել ե արդյոք Փորմալդէհիդ, թե՞ վոչ, մենք դիմում ենք ինդիկատորին, ավյալ դեպքում՝ Փուքսինածմբային թթվին, վոր գտնվում է մաղախողովակի մեջ: Ֆորմալդէհիդի գոլորշիների աղղեցության տակ այդ անգույն ինդիկատորը մանիշակագույն է դառնում:

Նմանապես նպատակահարմար ե վերստուգելու համար կիրառել Միկուլիչի թղթիկները, վորոնք բաղկացած են ոսլա և յոդ ծծած ֆիլտրի թղթիկներից: Միկուլիչի մուգ թղթիկները 100° Ց ջերմաստիճանի տակ կորցնում են իրենց գույնը:

Վերջապես, դեղինֆեկցիոն կամերաների աշխատանքը վերահսկողության յենթարկելու համար պետք է հետեւ կամերաների ջերմաչափի և մասումետրի աշխատանքին (համաձայն վերևում զետեղված աղյուսակի), ջերմաչափի և մանումետրի տվյալները համապատասխանում են իրար): Դեղկամերաների պարբերական վերստուգման աշխատանքը արձանագրվում է ստորև զետեղված վերստուգման քարտում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0927837

ԳԻՆԵ 50 Կ.

19

11

27962



Паро-формалиновая дезокамера японского типа  
и паровая камера Саксе

Гав ССР Армении, Эривань, 1934